ՀԱՅԵՐԻ ԳԵՆՈՑԻԴԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ս. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Օսմանյան կայսրության իթթիհատական ղեկավարող շրջանները, ելնելով իրենց պանթուրքական, պանիսլամական ծրագրերից, 1915—1916 թթ. մասսայական գենոցիդի ենթարկեցին արևմտահայ բնակչությանը։ Հայերի մասսայական ջարդը խլեց մեկ միլիոնից ավելի զոհ։ Ջարդի հետ միաժամանակ տեղի ունեցավ արևմտահայերի արտաքսումը իրենց պատմական հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից ու Կիլիկիայից, ինչպես նաև ուրիշ մարզերից դեպի Միջագետքի և Սիրիայի հեռավոր անապատները։ Արտաքսումն այնպես էր կազմակերպված, որպեսզի հնարավորին չափ շատ հայեր կոտորվեն ճանապարհին, իսկ հետո նաև արտաքսման վայրերում։ Առաջին հերթին ոչնչանում էին տղամարդկանց, ապա արտաքսում կանանց, երեխաներին և ծերերին։ Հայ որբերի, ինչպես նաև կանանց որոշակի մասը բռնի կերպով մահմեդականացվում, թուրքացվում էր։

Հայ ժողովրդի դեմ իրագործված այդ ծանրագույն հանցագործության մեջ իթթիհատական պարագլուխների հետ մեկտեղ լուրջ պատասխանատվություն են կրում նաև գերմանական իմպերիալիստները՝ թուրք իշխողների այն ժամանակվա դաշնակիցներն ու տերերը և այժմյան արևմտագերմանական միլիտարիստների ու ռևանշիստների նախորդները։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի պատմության պրոբլեմների վրա աշխատող առանձին հեղինակներ իրենց աշխատություններում նշել են գերմանական միլիտարիզմի հանցավոր դերը հայերի կոտորածի և արտաքսման գործում։ Բայց մեր գրականության մեջ դեռևս չկան այդ հարցին նվիրված հատուկ ուսումնասիրություններ։ Հոդվածի նպատակն է որոշ չափով լրացնել այդ բացը և ցույց տալ գերմանական ժողովրդի դեմոկրատական ուժերի պայքարը արևմտահայերի կոտորածի դործում իրենց իմպերիալիստական կառավարության մեղսակից բաղաքականության դեմ։

* * *

XIX դարի վերջերից գաղութային էքսպանսիայի ուղին բռնած իմպերիալիստական Գերմանիան ուժեղ պայքար սկսեց Օսմանյան կայսրությունում իր տնտեսական, քաղաքական և ռազմական ազդեցության ընդլայնման համար և առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին այդ պայքարում քիչ հաջողությունների չհասավ։ Իսկ պատերազմի ընթացքում Թուրքիան վերածվ-

վեր Գերմանիայի «...թե՛ ֆինանսական, թե՛ ռազմական վասալ»[1]։ Թուրքիայի նկատմամբ այդ քաղաքականությունը իմպերիալիստական Գերմանիան անց էր կացնում թուրքական կառավարության դաշնակցի, մուսուլմանների բարեկամի ու պաշտպանի դրոշի ներքո։ Եվ բոլորովին էլ զարմանալի չէ, որ սուլթանական կառավարության կողմից կատարվող հայկական ջարդերի ժամանակ գերմանական իմպերիալիզմը միշտ հանդես էր գալիս ի պաշտպանություն արյունարբու սուլթան Աբդուլ-Համիդի։ Իրենց դաժանությամբ ամբողջ աշխարհը զարհուրեցնող 1895—1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ը սուլթանին ուղարկեց իր դիմանկարը՝ բարեկամական մակագրությամբ և մի նամակ, որտեղ սուլթանին խորհուրդ էր տալիս շտապանվել և «իր հպատակներին ցույց տալ, որ ինքը միանձն է, Աստծո ողորմածությամբ և իր կամքը նրանց համար աստծո կամք է»[2]։

Կայսերական կառավարությունը ամեն կերպ ձգտում էր արդարացնել Աբդուլ-Համիդի կողմից կազմակերպված հայկական ջարդերը և արգելում էր Գերմանիայում հանդես գալ թուրքական իշխանությունների շարագործությունների դեմ։ Գերմանական կանցլեր Հոհենլոեն, կոտորածի պատճառները բարդելով հայերի վրա, ասում էր, որ հայկական շարժումը «կապված է անարխիստների ու սոցիալիստների հետ», և այդ պատճառով դրանում ոչ թե թուրքական կառավարությունն է մեղավոր, այլ «հայկական ռևոլյուցիոն-անարխիստական կոմիտեները»[3]։ Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Զաուրման Աբդուլ-Համիդի հետ ունեցած զրույցի ժամանակ, խրախուսելով և ոգևորելով նրան հայկական կոտորածների հարցում, հայտարարում է, որ «հայկական ապստամբության ճնշումը» համարում է «նրա իրավունքն ու պարտականությունը որպես գերիշխանի» և այդ տեսակետից արդարացնում էր ձեռնարկված «խիստ միջոցները»[4]։ Միաժամանակ նա ամենայն ուռճանասությամբ հաղորդում էր Բեռլին կոտորածի մանրամասնությունները. «Նա, ով պատկանում է այդ ազգին (այսինքն՝ հայերեն—Ս. Հ.),—գրում էր Զաուրման,—անպայման կոտորվում է, անկախ այն բանից, թե նրան որտեղ են գտել կամ հանդիպել։ Նրան վայր էին գցում ու ոտնատակ անում, ծակծկում ու կրակում նրա վրա այնքան, մինչև որ նա փչում էր իր վերջին շունչը»[5]։

Կոտորածից անմիջապես հետո Վիլհելմ II-ը, գերմանական ֆինանսական և արդյունաբերական կապիտալի մագնատների՝ Գերմանական բանկի դիրեկտոր Գեորգ ֆոն Սիմենսի, խոշոր արդյունաբերող Կրուպի և մյուսների կամքով, այցելեց Թուրքիա[6] և կոտորածի կազմակերպիչ Աբդուլ-Համիդին հայտարարեց իր բարեկամությունը, խրախուսելով սուլթանի դաժան գործունեությունը. Վիլհելմ II-ը որպես խորհրդանիշ հանձնեց նրան գերմանական հրա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 235։

[2] Л. В. Амфитеатров, Армянский вопрос, СПб, 1906, էջ 43։

[3] А. С. Ерусалимский, Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX века, М., 1951, էջ 198։

[4] «Die Grosse Politik der Europaischen Kabinette», 1871—1914, Բեռլին, հատ. XII (1), փաստաթուղթ № 2904։

[5] Նույն տեղում, փաստաթուղթ № 2905։

[6] Տե՛ս Георг Хальгартен, Империализм до 1914 г. (перевод с немецкого), М., 1961, էջ 230։

ցան[7]։ Դրանից անմիջապես հետո «Դոյչե վաֆեն ունդ մունիցիոնսֆաբրիկեն» գերմանական ֆիրման թուրքական կառավարությանը տրամադրեց մաուզերի սիստեմի 200 հազար հրացան[8]։ Պետական քարտուղար Բերգարդ Բյուլովը, որն ուղեկցում էր կայզերին նրա Թուրքիա կատարած ճանապարհորդության ժամանակ, հետագայում հիշում էր Աբդուլ-Համիդի մասին, որպես «հայերի պահիճի» և միաժամանակ գրում. «Իմ ամբողջ ծառայության ընթացքում ես ոգս եմ տարել գերմանա-թուրքական հարաբերությունները էլ ավելի բարելավելու համար, և չկա այնպիսի թուրքական շքանշան, այն էլ շողակնով, որը ես ստացած չլինեմ ի նշան երախտագիտության իմ այդ ջանքերի հանդեպ»[9]։ Իսկ գերմանական արքայազնը ամեն կերպ գովաբանում էր արյունարբու սուլթանին. «Աբդուլ-Համիդի տիպարի մեջ կա ինչ-որ հրապուրիչ և հետաքրքրական բան»,— գրում էր նա և նրան համարում ականավոր գործիչ[10]։ Կայզերական Գերմանիայի քաղաքականությունը հայերի կոտորածի վերաբերյալ շատ նրբորեն արտահայտեց Փարիզում հրատարակվող երգիծական «La Rire» («Ծիծաղ») հանդեսը, որի գեղեցիկ ծաղրանկարներից մեկը պատկերում էր Աբդուլ-Համիդին և Վիլհելմ II-ին, որպես հայեր որսողների[11]։

Իր բեղինյան ընկերոջ՝ Վիլհելմ II-ի «բարեհոգությունը» Աբդուլ-Համիդը առատաձեռնորեն հատուցեց երկաթուղային կոնցեսիաներով։ Թուրքիայում գերմանական կապիտալի հսկողության տակ գտնվող երկաթուղային ցանցի ընդհանուր տարածությունը 1896 թ. հասնում էր մինչև 1000 կմ։ Հաջորդ կոնցեսիան, որի վերաբերյալ բանակցություններ էին վարվում, նախատեսում էր երկաթուղու կառուցումը Անկարայից՝ արևմտահայկական քաղաքներ Սվազի և Դիարբեքիրի վրայով մինչև Բաղդադ[12]։ 1899 թ. թուրքական կառավարության հետ կնքվեց կոնցեսիա, որը հաստատվեց 1903 թ. Բաղդադի երկաթուղու կառուցման վերաբերյալ գերմանա-թուրքական հստակ համաձայնությամբ։ Այդ գործարքների հաջողությանը մեծ չափով նպաստեց Վիլհելմ II-ի «հայկական քաղաքականությունը»։ Պատահական չէր ստեղծվել արևմտահայերի մեջ այն պաղփարը, որ Գերմանիան Բաղդադի երկաթուղու կոնցեսիան ստացավ «հայերի արյան գնով»[13]։

Պատրաստվելով Թուրքիան դարձնել իրենց ռազմական վասալը, գերմանական իմպերիալիստները հսկայական նշանակություն էին տալիս Արևմտյան Հայաստանի տերիտորիային, որպես ռազմա-ստրատեգիական պլացդարմի՝ Ռուսաստանի և Անգլիայի դեմ հետագա գավթողական պատերազմների համար։ Գերմանական իմպերիալիստների կարծիքով այդ պլացդարմում պետք է ապրեր գերմանա-թուրքական բլոկի համար միանգամայն հուսալի բնակչություն։ Արևմտահայերին նրանք այդպիսին չէին համարում և այդ պատճառով ցանկանում էին արտաքսել նրանց իրենց բնակավայրերից։ Ահա

---

[7] Տե՛ս G. W. Hallgarten, Imperialismus vor 1914, München, 1951, Bd. I, էջ 268։

[8] „Kolnische Zeitung", von 13 Januar 1903։ Մեջբերված է G. W. Hallgarten-ի նշված գրքից, Bd. I, էջ 503։

[9] Бернгард Бюлов, Воспоминания, М.—Л., 1935, էջ 128, 132։

[10] «Записки германского крон-принца», М.—Л., 1923, էջ 49։

[11] „La Rire", 1898, նոյեմբերի 28։

[12] K. Helfferich, Die deutsche Turkenpolitik, 1921, էջ 11։

[13] Տե՛ս «British Documents on the Origins of the War», 1898—1914, հատ. X, փաստաթուղթ № 178։

այդ առթիվ գերմանական միլիտարիզմի ջատագովների մի շարք արտահայտություններ։ 1913 թ. նոյեմբերի 23-ին, հանդես գալով «Deutsch-Asiatische Gesellschaft»-ի խորհրդակցությունում (այդ ընկերության նպատակն էր նպաստել Գերմանիայի իմպերիալիստական շահերի ամրապնդմանը Ասիայում), գերմանական իմպերիալիզմի գավթողական ձգտումների ամենամոլի արտահայտողներից մեկը՝ Պաուլ Ռորբախն ասել է. «Աշխարհագրական տեսակետից Հայաստանն իրենից ներկայացնում է բնական և գրեթե անմատչելի մի ամրոց։ Մի կողմից նա սահմանակից է Ռուսաստանին, մյուս կողմից՝ իշխում է միջազգային բոլոր ճանապարհների վրա, որոնք նրա բնական պատնեշների ստորոտների մոտից անցնում են Փոքր Ասիայով՝ Ասիայի ամենահարուստ երկրներն ու ծովերը միացնելով Եվրոպայի հետ։ Կորցնելով Հայաստանը, Թուրքիան կդադարի գոյություն ունենալուց։ Կարելի է գրեթե առանց չափազանցության ասել, որ ժամանակակից Թուրքիայի համար նեղուցներին տիրապետելն անգամ չպետք է իր վրա գրավի այնպիսի ուշադրություն, ինչպես Հայաստանը ամուր իր ձեռքում պահելը՝ նրա գոյության այդ վերջին և ամուր պատվարը»[14]։ Մի քանի տարի անց Ռորբախն իր այդ նկատառումները զարգացրեց «Պատերազմը և գերմանական քաղաքականությունը» գրքում։ «Նա, ով տիրապետում է Հայաստանին,— գրել է Ռորբախը,— անմիջականորեն իշխում է ինչպես Փոքր Ասիայի արևելյան մասի, այնպես էլ Միջագետքի վրա»[15]։ Այնուհետև նա գրքում տալիս է Արևմտյան Հայաստանի աշխարհագրական դիրքի ռազմա-ստրատեգիական մանրամասն գնահատականը և հիմնավորում այն նշանակությունը, որ ունի այդ երկիրը գերմանական իմպերիալիզմի գավթողական պլանների տեսակետից։ Արևմտյան Հայաստանին Ռորբախի կողմից տրված ռազմա-ստրատեգիական գնահատականի հետ համաձայն էին ֆելդմարշալ ֆոն դեր-Հոլցը և գերմանական այլ ռազմական գործիչներ[16]։

Արևմտյան Հայաստանը հայերից մաքրելը նշանակում էր թեթևացնել ստրատեգիական խնդիրը ապագա թուրք-ռուսական ճակատում։ Այսպես գերմանական իմպերիալիստների մոտ ծնվեց Հայկական բարձրավանդակից հայերին արտաքսելու պլանը, որը համընկնում էր օսմանյան կառավարության պանթուրքական ձգտումներին։ Արտաքսման պլանը իրականացվելու էր հետևյալ կերպ։ Նախատեսվում էր Թուրքիայի՝ Ռուսաստանին սահմանակից հողերը բնակեցնել մահմեդականներով, իսկ անհանգիստ հայկական բնակչությանը վերաբնակեցնել սահմանից հեռու, Միջագետքի ավազուտ տափաստաններում, որտեղ նա կարող էր օգտագործվել որպես էժան բանվորական ուժ Բաղդադի երկաթուղու անցման վայրերում։ Վերջին դեպքում կիրականանար նաև հայերի արտաքսման գերմանական պլանի տնտեսական կողմը։

Գերմանական իմպերիալիստները հսկայական նշանակություն էին տալիս Միջագետքի գաղութացմանը։ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Գերմանիայում հրապարակ եկավ մեծ քանակությամբ գրականություն, որի մեջ

[14] Պ. Ռորբախի այդ նյութը գրի էր առնվել Բեռլինում ռուսական ռազմական գործակալ Բաղարովի կողմից, և որպես գաղտնի զեկույց ուղարկվել Պետերբուրգ՝ ռուսական բանակի գլխավոր շտաբին։ Տե՛ս Центральный государственный военно-исторический архив (ЦГВИА), ф. 2000с, оп. 1, д. 973, л. 110.

[15] Տե՛ս П. Рорбах, Война и германская политика, Петроград, 1915, էջ 62։

[16] Տե՛ս ЦГВИА, ф. 2000с, оп. 1, д. 973, л. 115.

մանրամասն կերպով մշակվում էին այդ գաղութացման պլանները[17], որոնց համաձայն Միջագետքում պետք է ստեղծվեին գերմանական խոշոր կալվածքներ՝ լատիֆունդիաներ. գերմանական պլանտատորները պետք է օգտագործեին տեղի բնակչության էժան աշխատանքային ուժը[18]։ Բայց որովհետև Միջագետքում այդպիսի աշխատանքային ուժի մեծ պակաս էր զգացվում, ապա հարկավոր էր լրացնել այն։ Այստեղ էլ գերմանական իմպերիալիստներին պետք եկան հայերը։ «Ռուսական Կովկասում,—գրում էր Պ. Ռորբախը,—կան յոթ կամ ութ միլիոն մահմեդականներ՝ թուրքերի արյունակից եղբայրներ։ Եթե Թուրքիային հաջողվեր, իր մահմեդական բնակչությանը դեպի հյուսիս առաջ մղելով՝ շփման մեջ մտնել նրանց հետ, ապա կստեղծվեր միևնույն ռասայով և կրոնով կապված 14—15 միլիոն մարդուց կազմված մի հզոր բույն, որը պիմազրության ահեղ ուժ կհանդիսանար։ Քանի որ Հայաստանը խոչընդոտում է այդ պլանի իրականացմանը, ապա հարկավոր է բարեփոխել այդ շրջանի բնակչությունը, դեն շպրտելով արմատական բնակիչներին՝ հայերին։ Միջագետքը, որտեղով պետք է անցնի Բաղդադի երկաթուղին, նոսր է բնակեցված։ Այդ հանգամանքը վնասակար կերպով է անդրադառնում ճանապարհի տնտեսական զարգացման վրա, և այդ պատճառով լրիվ հասկանալի է, որ Գերմանիան ձգտում է օգնել դժբախտությանը։ Դրա համար բավական կլիներ այստեղ բնակեցնել Հայաստանի հայերին, իսկ վերջինների տեղում թույլ տալ օսմանյան կառավարությանը մահմեդականներ տեղափոխել Թրակիայից և Ռուսաստանից։ Եթե այդպես արվեր՝ Հայաստանը մի հարվածով կպոկվեր Ռուսաստանի ձեռքից»[19]։ «Deutsch-Asiatische Gesellschaft»-ի վերը նշված խորհրդակցությունում Ռորբախն այդ հարցի առթիվ հայտարարեց. «Կարելի է հուսալ, որ ծայրամասում (խոսքը Միջագետքի մասին է—Ս. Հ.) կարգի և օրինականության հաստատմանը զուգընթաց ի հայտ կգա բնակչության որոշ հոսք փոքրասիական Թուրքիայի մյուս վայրերից, ինչպես օրինակ, Հայաստանից, որտեղ, կյանքն ու խաղաղ աշխատանքը կմնան նախկին, ավելի քիչ շահավետ և ամեն տեսակ բռնություններից ավելի քիչ ապահովված պայմաններում»։ Դրանով Ռորբախը հասկացնում էր, որ նորմալ պայմանների վերականգնումը Հայաստանում ձեռնտու չէ գերմանական իմպերիալիստներին, բանի որ վերջին դեպքում «բնակչության հոսք» տեղի չի ունենա Հայաստանից Միջագետք։ Բայց Ռորբախը քարոզում էր ոչ միայն հայերի արտաքսումը Արևմտյան Հայաստանից, այլև կողմնակից էր նրանց ուղղակի ֆիզիկական ոչնչացմանը։ «Հայաստանը,—ասում էր նա խորհրդակցությունում,—ծառայում է որպես ամենավտանգավոր և գրեթե միակ օջախը, որտեղ կարող են բռնկվել ներքին լուրջ անկարգություններ, ըստ որում հրդեհի կրակը կարող է տա-

[17] Այդ գրականությունից կարելի է նշել. A. Sprenger, Babylonien, das reichste Land der vorzeit und das lohnendste Kolonisationsfeld fur die Gegenwart, Heidelberg, 1886; E. Sachau, Reise in Syrien und Mesopotamien, Leipzig, 1883; E. Sachau, Am Euphrat und Tigris, Reisenotizen Leipsig, 1900; M. Oppenheim, Vom Mittelmeer zum Persischen Golf, Berlin, 1898; H. Grothe, Die Bagdadbahn und das schwabische Bauernelemente in Transkaukasien und Palastina, Gedaken zur Kolonization Mesopotamiens, München, 1902.

[18] Տե՛ս A. Sprenger, նշվ. աշխ., էջ 265։

[19] Պ. Ռորբախի այդ հայտարարությունը տպված է եղել ֆրանսիական „Temps" հանրահայտ թերթում, որտեղից և այն արտատպվել է Թիֆլիսում հրապարակվող „Кавказское слово"-ի 1916 թ. ապրիլի 15-ի համարում։

լածվել նաև թուրքական կայսրության ուրիշ, թեկուզ և այդ տեսակետից ավելի քիչ վտանգավոր մասերը։ Այդ պատճառով էլ Հայաստանում հանդարտության հաստատումը պետք է, ներկայումս հանդիսանա թուրքական կառավարության ամենակարևոր խնդիրներից մեկը։ Հետևաբար այդ էլ հանդիսանում է նաև մեր գերմանական քաղաքականությունը ...հայերի ոչնչացումը ծայրամասում հանդարտության հաստատման և այն ավելի ամուր կերպով Թուրքիային միացնելու միջոցներից մեկն է»։ «Զեկուցագրի այդ բավական անկեղծ խոսքերից,—միանգամայն արդարացիորեն հետևցնում է Բեռլինում ռուսական ռազմական գործակալ Բաղարովը, որը ներկա էր խորհրդակցությանը,—կարելի է եզրակացնել, որ Գերմանիայի համար նույնպես Հայաստանում հանդարտություն հաստատելը հայկական անհանգիստ բնակչության կոտորածի միջոցով... հանդիսանում է, եթե ոչ ցանկալի, ապա համենայն դեպս ծայրամասի խաղաղեցման նրա շահերին չհակասող միջոց», իսկ ջարդից փրկված հայ փախստականները «հանդիսանում են Գերմանիային խիստ ցանկալի տարր Միջագետքի արտակարգ նոսր բնակչությունը ավելացնելու համար»[20]։

Հայկական հարցի առթիվ Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության Արևելյան բաժնի գլխավոր Պ. Թորբախի այդ ասույթներն արտահայտում էին գերմանական իմպերիալիստական կառավարող շրջանների ձգտումները։ Խորհրդակցությունում ֆելդմարշալ, ֆոն դեր-Հոլցը շնորհակալություն հայտնեց Թորբախին՝ հույժ կարևոր և գերմանական հասարակության լայն շրջաններին հետաքրքրող հարցերի ճիշտ լուսաբանման համար[21]։ Խորհրդակցության նյութերը լայնորեն ոգեկոչվում էին ենթարկվում ոչ միայն գերմանական, այլև արտասահմանյան մամուլում։ Թորբախից բացի, նույնանման հայտարարություններով պանդան առթիվներով հանդես էին գալիս նաև գերմանական պետական ու ռազմական ուրիշ գործիչներ։ Արտաքին գործերի ստատս-քարտուղարի (մինիստրի) տեղակալ Արթուր Զիմերմանը 1913 թ. դեկտեմբերին հայտարարեց. «Ըստ էության հայերը պետք չեն Գերմանիային։ Հայաստանը՝ բնակեցված հայերով՝ վնասակար է նրա շահերին»[22]։ Հանդես գալով գերմանա-թուրքական կոմիտեի նիստում, 1914 թ. փետրվարին, ֆելդմարշալ ֆոն դեր-Հոլցը ասաց. «Հարկ է Թուրքիան նոր ապետ փրկելու համար միանգամ ընդմիշտ ռուս-թրքական սահմաններու կից Վանի, Բաղեշի և Կարսի կուսակալության մեջ ապրող կես միլիոն հայությունը հեռացվի ռուս-թուրքական սահմանն և փոխադրվի հարավ. Հալեպի և Միջագետքի կողմերը։ Իսկ այս կողմերեն ալ արարները փոխադրվին ռուս-թրքական սահմանները»[23]։

Ինչպես երևում է, Գերմանիայի իմպերիալիստական շրջաններում տարաձայնություն գոյություն չուներ Արևմտյան Հայաստանից հայկական բնակչությունը Միջագետք արտաքսելու պլանի իրականացման նպատակահարմարության առթիվ։ Վեճեր էին գնում միայն այն մասին, թե ո՞ւմ բնակեցնել Արևմտյան Հայաստանի՝ հայերից ազատված հողերում։ Ոմանք ձգտում էին

20 Տե՛ս ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 973, лл. 110—115.

21 Նույն տեղում, թ. 115։

22 «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительства», М.—Л., 1931, серия III, т. I, էջ 119։

23 Պ ա ղ ա ր յ ա ն, Հայ Դողդոթան, Վիեննա, 1922, էջ 33։

թուրքեր բնակեցնել, մյուսները՝ արարներ, իսկ երրորդները, իրենց նեղությունն չպատճառելով ազգային պատկանելության վերլուծություններով, արտահայտվում էին ընդհանրապես մահմեդականներ բնակեցնելու։

Հայերի արտաքսման վերաբերյալ գերմանական իմպերիալիստների պլանները տարածվում էին ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Կիլիկիայի վրա, որի հայկական բնակչության թիվը, ըստ Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքության տվյալների, 1913 թ. հասնում էր 407 հազարի[25]։ Առաջին համաշխարհային պատերազմի սախսորյակին իմպերիալիստական տերությունների միջև կատաղի պայքար էր գնում Կիլիկիայում գերակշռող ազդեցության հասնելու համար։ Այդ պայքարում հատկապես աչքի էին ընկնում ֆրանսիական ու գերմանական իմպերիալիստները։ Առաջինները դարերից ի վեր այդ տերիտորիան համարում էին իրենց ազդեցության «օրինական» շրջանը, իսկ վերջինների համար Կիլիկիան առանձնահատուկ նշանակություն էր ձեռք բերել այն պատճառով, որ այստեղից անցնում էր Բաղդադի երկաթուղի կարևորագույն ուղեմասերից մեկը։ Հենց այստեղ էին միանում այդ ճանապարհի Անատոլիայից Միջագետք և Սիրիա տանող մայրուղիները։ Դրա համար գերմանական իմպերիալիստները առավելագույն եռանդ էին թափում Կիլիկիան միմիայն իրենց քաղաքական-տնտեսական ազդեցությանը ենթարկելու համար։ Նրանց հաջողվեց ֆրանսիացիներից վերադարձնել գոյություն ունեցող Մերսին—Տարսոն—Ադանա երկաթուղագիծը, որը ելք էր տալիս դեպի Միջերկրական ծով։ Նրանք շարունակ պայքարում էին այդ շրջանում նոր կոնցեսիաներ ստանալու համար։ Գերմանական իմպերիալիստները իրենց լուրջ մրցակիցներն էին համարում Կիլիկիայի հայկական բուրժուազիային և այդ պատճառով կողմնակից էին հայերի արտաքսմանը Կիլիկիայից։ Այդ մասին ֆրանսիական ակադեմիայի անդամ Ֆրեդերիկ Մասսոնը ամենայն իրավասությամբ գրում էր. «Գերմանացիները թուրքական քաղաքականության հրահրողներն էին, նրանք նախանշեցին Կիլիկիայի հայերի կոտորածի տարին (խոսքը 1909 թ. Ադանայի կոտորածի մասին է—Ս. Հ.), որպեսզի Բաղդադի երկաթուղագծից հեռացնեն իրենց հետ մրցակցող վաճառականներին»[26]։ Այդ իսկ պատճառով բոլորովին էլ զարմանալի չէր, որ գերմանական գաղութացման մասին տարածվող լուրերը մշտապես տագնապ էին առաջացնում Կիլիկիայի հայերի մեջ[27]։

Գերմանական գաղութարարները երազում էին դրավել Կիլիկիայի պըտղաբեր և հարուստ հողերը։ Նրանց պետք էր բնակեցնել Բաղդադի երկաթգծի միայն այն ուղեմասերը, որոնք անցնում էին Միջագետքի ավազոտ անապատներով։ Իսկ այնտեղ հարկավոր էին ոչ թե հայ վաճառականներ ու առևտրականներ, այլ միայն էժան բանվորական ձեռքեր, որպիսիք էլ, ըստ նրանց պլանների, պետք է դառնային Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից արտաքսված հայ վերարնակիչները։

---

25 Տե՛ս ՀՍՍՌ ՊՊԿԱ, ֆ. 57, գ. 734, թ. 6։

26 «Echo de Paris», 1916, № 11563, նաև՝ ЦГИА Грузинской ССР, ф. 520, оп. 1, д. 4, л. 123.

27 Տե՛ս «British Documents on the Origins of the War», հատ. X, փաստաթուղթ № 178։

* *

Առաջին համաշխարհային պատերազմը և իմպերիալիստական պետությունների բաժանվելը երկու լագերի գերմանական իմպերիալիզմի համար ստեղծեցին բարենպաստ պայմաններ՝ իրականացնելու նախապես նշված պլանները։ Այդ պատճառով չպետք է զարմանալ այն օգնության և աջակցության վրա, որ ցույց էին տալիս գերմանական իմպերիալիստները երիտասարդ թուրքերին (իթթիհատիստներին) հայերի արտաքսման և կոտորածի եղեռնական գործում։

Վերը արդեն ասվեց, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական իմպերիալիստները Թուրքիայում ամենալիիրավ տերերը դարձան։ Հենց միայն այս փաստից, եթե անգամ գոյություն չունենային արևմտահայերի վերաբերյալ գերմանական պլանները, կարելի էր եզրակացնել, որ հայերի կոտորածի գործում իթթիհատիստական դահիճների գործողությունների համար պատասխանատու են նաև նրանց տերերը՝ գերմանական իմպերիալիստները։ Բրենք՝ գերմանական իմպերիալիզմի ներկայացուցիչները հիանալի կերպով հասկանում էին այդ։ Դրա համար էլ, ինչպես և թուրքական իշխողները, նրանք կոտորածի սկզբում, խուսափելով պատասխանատվությունից, ժխտում էին հայերի կոտորածի փաստերը։ Այդպես վարվեց, օրինակ, Վաշինգտոնում գերմանական դեսպան Բեռնդորֆը, 1915 թ. սեպտեմբերի 23-ին հայտարարելով, որ Թուրքիայում հայերի ոչ մի կոտորած չկա և կոտորածի մասին լուրերը միայն երևակայական բամբասանքներ են[28]։ Բայց գերմանական իմպերիալիստները փաստերը ժխտել կարող էին միայն կոտորածի սկզբնական շրջանում։ Հետագայում, երբ դրանք թաքցնելն արդեն անհնարին դարձավ, նրանք փորձում էին արդարացնել այդ ոճրագործությունները։ Այդ նպատակի համար հրատարակվեցին հատուկ գրքեր և լրագրային հոդվածներ։ Լույս տեսավ, օրինակ, Բրատերի «Հայկական հարց»[29] գրքույկը, որտեղ հեղինակը ապացուցում էր, «որ պատերազմի ժամանակ այդօրինակ միջոցառումները հանդիսանում են ամենից առավել հարկավոր և ստիպողական»[30]։ «Կենտրոնական Եվրոպա» գրքում Ֆրիդրիխ Նաումանն արդարացնում էր թուրքերի գործողությունները[31]։ Զմոռանալով Բաղդադի երկաթուղու մասին, նա գրում էր, որ կոտորածից փրկված հայերը կարող են օգտագործվել Գերմանիայի կողմից, և դրա համար նրանք պետք է ավելի ուշադիր վերաբերմունքի արժանանան[32]։ Թուրքիայում Վիլհելմ II կայսրի ներկայացուցիչ Հումանը հայտարարում էր, որ թուրքերն ու հայերը չեն կարող ապրել միասին և այդ ժողովուրդներից մեկը պետք է ոչնչանա, բայց քանի որ թուրքերը հանդիսանում են գերմանացիների բարեկամները, ապա պետք է ոչնչանան հայերը[33]։

28 Տե՛ս «Կոչնակ», Նյու-Յորք, 1915, 2 հոկտեմբերի № 40, էջ 862—863։

29 Bratter, Die Armenische Frage. Բեռլին, 1915։

30 Մեջբերված է «Le traitement des armeniens dans l'Empire Ottoman (1915—1916)» գրքից։ Փարիզ, 1916, էջ 113։

31 Տե՛ս Friedrich Nauman, Membre du Reichstag. L'Europe central. Փարիզ, հատ. I։

32 Տե՛ս «Մշակ», 1915, 22 սեպտեմբերի, № 207, էջ 1։

33 «Memoires de l'ambassadeur Morgenthau», էջ 320—321։

Գերմանական իմպերիալիզմի հայտնի ջատագով կոմս Էռնստ ֆոն-Ռեվենտլովը, արդարացնելով թուրքական գազանությունները, «Deutsche Tages Zeitung»-ում գրում էր. «Եթե Բ. Դուռը անհրաժեշտ է համարում, որպեսզի հայերի ապստամբությունները (?) ճնշվեն բոլոր միջոցներով, որպեսզի բացառվի դրանց կրկնման ամեն մի հնարավորություն, ապա այդպիսի ճնշումն արդեն «սպանություն» կամ «դաժանություն» չէ, այլ պարզապես արդարացի և անհրաժեշտ միջոցառում»[34]։ Գերմանական մամուլը լի էր այդպիսի կարծիքներով։

1916 թ. սեպտեմբերի 29-ին Գերմանիայի արտաքին գործերի մինիստր Գոտլիբ ֆոն Յագովը հայտարարեց, որ հայերի կոտորածի պատճառով Գերմանիան չի կարող խզել իր դաշնակցական կապերը Թուրքիայի հետ։ Մի բանի ամիս անց ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգը հրապարակայնորեն հավանություն տվեց թուրքական կառավարության գործողություններին ընդդեմ հայերի[35]։ Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը, արդարացնելով թուրքական կառավարության գործողությունները, ասաց. «Հայերը այս պատերազմում հանդես եկան որպես թուրքերի թշնամիներ և, ակներև է, որ այդ երկու ժողովուրդները չեն կարող համատեղ ապրել միևնույն երկրում»[36]։ Էրզրումի հյուպատոս Ակերսը ուղղակի հայտարարեց, թե հայերը «արժանի պատիժ կրեցին»[37]։ Այսպես էին արդարացնում գերմանական իմպերիալիստները հայերի կոտորածը Թուրքիայում։ Բայց նրանք ոչ միայն արդարացնում էին ջարդերը, այլև անմիջականորեն մասնակցում էին դրանց։

Վանգենհայմի 1915 թ. մարտի 31-ի դեսպանի գեկուցագրից հայտնի դարձավ, որ երիտասարդ թուրքերի պարագլուխ Էնվեր փաշան ձեռնամուխ է եղել գեպի Միջագետք հայկական բնակչության ընդհանուր արտաքսման պլանի իրականացմանը[38]։ Հետագայում Վանգենհայմը, իսկ ապա նաև դեսպանի պաշտոնում նրան փոխարինած Մետերնիխը (1915 թ. նոյեմբերի 15-ից) և Բենդորֆը (1916 թ. հոկտեմբերի 30-ից) կանոնավոր կերպով և լրիվ մանրամասնությամբ գեկուցում էին իրենց կառավարությանը հայերի ջարդի և արտաքսման ընթացքի մասին[39]։ Իսկ ինչպե՞ս էր վերաբերվում գերմանական կառավարությունը այդ գեկուցագրերին։ 1915 թ. հուլիսի 4-ին թուրքական կառավարությանն ուղղված պաշտոնական դադանի հայտարարության մեջ նա լիովին հավանություն էր տալիս և պաշտպանում վերջինիս գործողությունները հայերի նկատմամբ[40]։ Իրենց կառավարության դիրքի համաձայն էին գործում դիվանագիտական, հյուպատոսական, ռազմական, միսիոներական և գերմանական մյուս գործակալները Թուրքիայում։ Նրանք իրենց ուժերի և կարողությունների չափ օգնում էին թուրքական իշխանություններին՝ վերջիններիս կողմից հայերի գենոցիդի իրականացման գործում։

---

34 Տե՛ս «Армянский вестник», Москва, 1916, № 2, էջ 20։

35 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ կեսարիոյ, Գահիրէ, 1937, հատ. Բ, էջ 1150։

36 «Mémoires des l'ambassadeur Morgenthau», էջ 320։

37 Տե՛ս ՀՍՍՌ ՊՊԿԱ, ֆ. 57, գ. 632, թ. 16։

38 Տե՛ս «Deutschland und Armenien (1914—1918). Sammlung diplomatischer aktenstücke herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius», 1919, Պոտսդամ, էջ 79։

39 Տե՛ս նույն տեղում, վերոհիշյալ անձանց գեկույցները։

40 Նույն տեղում, էջ 96—97։

Դեռ մինչև պատերազմի սկիզբը Էրզրումի հյուպատոս Անդերսն սկսեց հայերի կոտորածի նախապատրաստություններ։ Էրզրումում նա կազմակերպում էր մրցանակային հրաձգություններ, որոնց մասնակիցներն էին քրեական տարրերը։ Այդ զվարճալիքը հայերի մեջ լուրջ տագնապ առաջացրեց մոտալուտ կոտորածների նախապատրաստման նկատմամբ[41]։ Իսկ երբ այդ պահը վրա հասավ և կոտորածի հետ միաժամանակ սկսվեց հայկական բնակչության արտաքսումը, Վանդենհայմը հրամայեց Էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի, Բաղդադի հյուպատոսներին «խոչընդոտ չհարուցել» անցկացվող «միջոցառումներին»[42]։ Բայց գերմանական հյուպատոսները ոչ միայն «խոչընդոտ» չէին հարուցում, այլև տեղերում իրախուսում էին թուրքական իշխանությունների ավազակային գործերը և կամ անձամբ մասնակցում դրանց։ Այդ ոճիրի ակտիվ մասնակիցներից էր Հալեպի գերմանական հյուպատոս Ռոզլերը[43]։ Ուրֆա քաղաքում գերմանական դեսպանը եռանդով ղեկավարում էր ջարդարարներին։

Գերմանական հյուպատոսները ձեռնարկում էին բոլոր միջոցները, որպեսզի խանգարեն արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպումը։ Այդ տեսակետից ակտիվորեն էին գործում Ռոզլերը՝ Մարաշում, գերմանական մեկ ուրիշ հյուպատոս՝ Շեպարդը՝ Այնթափում[44]։ Երբ այստեղ կամ այնտեղ, հակառակ գերմանական հյուպատոսների կամքի, տարերայնորեն առաջ էին գալիս արևմտահայերի ինքնապաշտպանության օջախներ, նրանք գործարար մասնակցություն էին ցույց տալիս դրանց ճնշմանը[45]։ Էրզրումի գերմանական հյուպատոսության աշխատակիցները թուրքական հրոսակների հետ միասին մասնակցում էին անպաշտպան հայուհիների դեմ կատարվող բռնություններին[46]։

Թուրքական բանակի զորահավաքի սկզբում գերմանական ռազմական հրահանգիչները ժամանեցին Էրզրում։ Նրանց գործունեության առաջին անմիջական հետևանքը եղավ հայ զինվորների հեռացումը թուրքական զորամասերից[47]։ Հեռացվածներին հետագայում հավաքեցին բանվորական դումարտակներում՝ ճնդակահարության հարմարվելության համար։ Գերմանական սպաները գլխավորում էին թուրքական զորքերը Վանի հերոսական ինքնապաշտպանության կռիվների ժամանակ[48]։ Նրանք անմիջականորեն ղեկավարում էին Վանի պաշտպանների վրա կրակող թուրքական հրետանին[49]։ Տրապիզոնում, տեղական հրոսակների հետ հավասար, կոտորածի կազմակերպիչներն էին գերմանական սպա Ստանգեն և Թբիլիսի գերմանական նախկին հյուպատոս Շատլեներերը[50]։ Առաջինը մասնակցել է հայերի կոտորածին նաև

41 Տե՛ս «Сборник дипломатических документов, Реформы в Армении», Петроград, 1915, էջ 144։

42 Տե՛ս «Deutshland und Armenien», էջ 79։

43 Տե՛ս «Revue des Deux Mondes», 1916, փետրվարի 1։

44 Տե՛ս «Le traitement des armeniens...», էջ 103։

45 Տե՛ս «Համբավարեր», 1916 N 11, էջ 343։

46 Տե՛ս ՀՍՍՌ ՊՊԿԱ, ֆ. 57, գ. 632, թ. 16։

47 Տե՛ս նույն տեղում, թթ. 1—2։

48 Տե՛ս «Կոչնակ», 1915, 23 հոկտեմբերի, N 43, էջ 935։

49 Տե՛ս Ե. Ռշտունի, Վանի դեպքերը և ինքնապաշտպանությունը, «Կոչնակ», 1915, էջ 241—244։

50 Տե՛ս «Армянский вестник», 1916, № 33, էջ 23։

Կեմախ քաղաքում[51]։ Ուրֆա քաղաքի հայկական թաղերը ոմրակոծող թուրքական հրետանին ղեկավարում էր գերմանացի կոմս Վոլֆ ֆոն Վալֆսկելը[52]։

Խարբերդում գերմանական միսիոներների պարագլուխ Իոհան Էյմանը կոտորածից առաջ զինաթափեց հայկական բնակչությանը և, այդպիսով, անգնահատելի ծառայություն մատուցեց թուրքական հրոսակներին[53]։ Զեյթունցիների ինքնապաշտպանության ճնշման գործում նենգ դեր խաղաց գերմանացի Բլանկը[54]։

Գերմանական իմպերիալիստները հայերի կոտորածից և արտաքսումից քաղում էին նաև նյութական շահ։ Կոտորածի հետևանքով մնացած ամբողջ տնային ու եկեղեցական պղնձյա իրերը, այդ թվում հայկական եկեղեցիների ու վանքերի բոլոր մեծ և փոքր զանգերը, սայլերով ու եզների վրա հասցվում էին երկաթուղուն, որտեղից այդ բոլորն ուղարկվում էր Գերմանիա։ Այդ ամբողջ թանկարժեք մետաղը Կրուպի գործարաններում օգտագործվում էր ռազմական նպատակների համար[55]։ Գերմանական սպաները թալանում և տանում էին արտաքսվածների զորգերն ու մյուս թանկարժեք իրերը[56]։

* * *

Այդպիսին էր իմպերիալիստական Գերմանիայի վերաբերմունքը արևմտահայերի նկատմամբ։ Բայց պաշտոնական իմպերիալիստական Գերմանիայից բացի, գոյություն ուներ և ուրիշ՝ բանվորական ու դեմոկրատական Գերմանիա, որի վերաբերմունքը դեպի հայկական հարցն ու արևմտահայերի ճակատագիրը միանգամայն այլ էր։

Պատերազմի տարիներին հայերի կոտորածի նկատմամբ գերմանական կառավարության քաղաքականության վճռական մերկացումով հանդես եկավ միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ Կարլ Լիբկնեխտը, որը Ռայխստագի 1916 թ. հունվարի 11-ի նիստում հարցում կատարեց կառավարությանը[57]։ «Կայսերական գրասենյակի պետը,—ասվում էր հարցման մեջ,—տեղեկություններ ունի՞ արդյոք այն մասին, որ ներկայիս պատերազմի ընթացքում մեր դաշնակից Օսմանյան կայսրությունում հայ ժողովուրդը հարյուր հազարներով քշված է իր տներից ու ենթարկված կոտորածի։ Ինչպիսի հայտարարություններ է արել գրասենյակի պետը թուրքական կառավարությանն այդ հանցագործությունների մեղավորներին արժանի պատասխանատվության ենթարկելու մասին, Թուրքիայում հայ ժողովրդի մնացած մասի պահպանության և նման դաժանությունների կրկնումը լրիվ կանխելու մա-

51 Նույն տեղում, 1916, № 8, էջ 8։

52 «Schweizerische Orient-mission», 1917, № 4, էջ 2—3։

53 Տե՛ս Մ. Գ. Ճիզմեճյան, Խարբերդ և իր գավակները, Ֆրեզնո, 1955, էջ 440—441։

54 Տես «Le traitement des arméniens»..., թ. 415, Գ. Հ. Գալուստյան, Մարաշ, Նյու-Յորք, 1934, էջ 171—177։

55 Տե՛ս Պաղարյան, Հայ Գողգոթան, էջ 229։

56 Տե՛ս Զ. Եսայան, Մուրատի ճամբորդությունը Սվազեն Պաթում, Պոսթրն, 1920, էջ 85։

57 Անհրաժեշտ է նշել, որ պատերազմի ժամանակ գերմանական Ռայխստագի ռեակցիոն ներկայացուցիչներն ու իշխանավորները հնարավորություն չէին տալիս Կ. Լիբկնեխտին օգտագործելու պառլամենտական ամբիոնը ծավալուն ելույթների համար և նա ստիպված դիմում էր այսպես կոչված «փոքր» կամ «կարճ հարցումների տակտիկային։

սին»[59]։ Կ. Լիբկնեխտի հարցումը խանդարեց Ռայխստագի նիստի «պարկեշտ» ընթացքը և առաջացրեց բուրժուական ու սոցիալ-շովինիստական դեպուտատների դայրույթը։ «Հայկական» և այլ հարցումների համար Ռայխստագի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան 1916 թ. հունվարի 12-ին, 60 ձայնով ընդդեմ 25-ի, զրկեց Կ. Լիբկնեխտին ֆրակցիայի անդամի իրավունքներից[60]։ Բայց Կ. Լիբկնեխտը չհանձնվեց։ Որպեսզի, իր խոսքերով ասած, «գերմանական իմպերիալիստական կառավարությանը նորից ամբողջ աշխարհի առջև խայտառակության սյունին գամի», նա կրկին վերադարձավ հայկական դեպքերին և «Սպարտակ» ռևոլյուցիոն կազմակերպության կողմից անլեգալ կերպով հրատարակվող «Քաղաքական նամակներից» մեկում 1916 թ. հունվարի 27-ին գրեց. «Թուրքական կառավարությունը կազմակերպեց հայկական զարհուրելի կոտորածները։ Ամբողջ աշխարհն այդ գիտե և ամբողջ աշխարհն այդ ոճրագործության համար հանցավոր է համարում Գերմանիային, չէ՞ որ Կոստանդնուպոլսում թուրքական կառավարությանը ղեկավարում են գերմանական սպաները։ Ոչ մի բան չգիտեն միայն Գերմանիայում, որովհետև գերմանական մամուլի բերանի մեջ գրված է գլխարանակ»[61]։ Նույնիսկ բանտում, որ նրան նետեցին կայզերական Գերմանիայի ոճրագործ. իշխանությունները, Կ. Լիբկնեխտը չդադարեց հայ ժողովրդի հանդեպ կատարվող մեծ եղեռնի դեմ բողոքելուց։ 1916 թ. հուլիսին Բեռլինի թագավորական դատախազությանն ուղղված իր դիմումի մեջ Կ. Լիբկնեխտը (ինչպես ինքն է ասում, «ոչ թե այն բանի համար, որ համոզի դատարանին, այլ միայն նրա համար, որ ասի ճշմարտությունը») գրեց. «Գերմանիան,... Թուրքիայի դաշնակիցը, որի ձեռքերը շաղախվել են հայերի արյան մեջ և որը այս պատերազմի ժամանակ անչափ բազմացրել է իր մեղքը, կատարելով անբախտ հայ ժողովրդի դաժան կոտորածը։ Մտածե՛լ է միայն պետք»[62]։

Կ. Լիբկնեխտի հարցման տպավորությունը վերացնելու նպատակով գերմանական կառավարությունը կոտորածի շուրջն ունեցած դավադիր լռությունից անցավ թուրքական կառավարության գործողությունների ուղղակի արդարացմանը։ 1916 թ. հունվարի 11-ին Արտաքին գործերի մինիստրության քաղաքական բաժնի պետ ֆոն Շտումը հրապարակեց կառավարության հետևյալ պատասխանը Կ. Լիբկնեխտի հարցումին. «Կայզերական կանցլերին հայտնի է, որ Հայաստանում տեղի են ունեցել մեր թշնամիների կողմից կազմակերպված ռևոլյուցիոն ցույցեր և որ այդ ստիպել է թուրքական կառավարությանը տեղերին արտաքսել հայտնի շրջաններից և նրանց բնակեցնել նոր վայրերում։ Այժմ մտքերի փոխանակություն է կատարվում այն մասին, թե ինչպես են տեղադարձել այդ միջոցառումները բնակչության վրա։ Հետագա տեղեկություններ տալը անհնարին է»[63]։ Այդ պատասխանից հետո Գերմանիայում սկսվեց Թուրքիայում հայերի մասսայական կոտորածի արդարացման մի ամբողջ կամպանիա։

---

[59] «Stenographische Berichte über die Verhandlungen des Deutschen Reichstages», Բեռլին, հատ. 306, էջ 512. Նաև «Կոչնակ», 26 դեկտեմբերի, 1916, էջ 225։

[60] Տե՛ս „Vorwarts", 1916, հունվարի 12։

[61] Karl Liebknecht, Ausgewahlte Reden, Briefe und Aufsatze, Dietz Verlag, Բեռլին, 1952, էջ 350, նաև «Համրավարեր», 1916, № 17, էջ 538։

[62] Карл Либкнехт, Мой процесс по документам, 1918, էջ 41, 51։

[63] «Le traitement des armeniens...», էջ 25-26։

Բոլշևիկները բարձր գնահատեցին Կ. Լիբկնեխտի և «Սպարտակ» կազմակերպության այդ խիզախ գործողությունները։ Բոլշևիկյան «Կարմիր բանվոր» թերթը «Կառլ Լիբկնեխտն ու հայկական կոտորածները Տաճկաստանում» հոդվածում ընդգծում էր, թե ինչ խոշոր դեր կատարեց Կ. Լիբկնեխտը գերմանական իմպերիալիզմի ոճիրը մերկացնելու գործում[63]։

Կ. Լիբկնեխտի և «Սպարտակ» կազմակերպության օրինակին հետևեցին բազմաթիվ ազնիվ գերմանացիներ։ Գերմանական լրագրերից մեկի թղթակից Հարի Շտյուրմերը, օրինակ, Փարիզում մի գիրք հրատարակեց, որտեղ կայրությամբ մերկացրեց ու մեղադրեց գերմանական և թուրքական կառավարություններին հայերի կոտորածի կազմակերպման և իրագործման համար[64]։ Դոկտոր Լեպսիուսը հատուկ կոչով հայտարարեց այն մասին, թե ինչպես Գերմանիայի թույլտվությամբ և դրդմամբ փորձ է կատարվել երկրի երեսից ջնջել Հայ ժողովրդին[65]։ Կոչը, որի տակ ստորագրել էին Լեպսիուսն ու նրա համախոհները, բռնագրավվեց։ Նախազգուշական միջոցներ ձեռք առնվեցին հենց իր՝ Լեպսիուսի նկատմամբ[66]։ Պրոֆեսոր Յուլիուս Ռիխտերի և Իոհան Վանեկի կողմից Բեռլինում հրատարակվող «Allgemeine Missions Zeitschrift»-ը հայերի կոտորածի մասին հաշվետվություն հրապարակեց, որը կազմված էր գերմանացի ականատեսների ցուցմունքների հիման վրա։ Գերմանական դրաբնությունը խստագույն կերպով արդելեց հաշվետվության արտատպությունն ու սմենն տեսակ տարածումը[67]։ Նույն բախտին էին արժանանում նաև այն հրատարակությունները, որոնք համարձակվում էին տեղեկություններ տալ այդ մասին։

Այսպիսով, եթե արևմտահայերի ցեղասպանը հովանավորվում էր պաշտոնական Գերմանիայի կողմից, ապա գերմանական ժողովրդի դեմոկրատական ուժերը հանդես եկան ի պաշտպանություն հալածվող հայերի, մերկացնելով ու մեղադրելով կայսերական կառավարությանը։

ГЕНОЦИД АРМЯН В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ И ОТВЕТСТВЕННОСТЬ ИМПЕРИАЛИСТИЧЕСКОЙ ГЕРМАНИИ

С. М. АКОПЯН

(Резюме)

Правящие круги иттихатской партии, осуществляя свои пантюркистские, панисламистские планы, в 1915—1916 гг. подвергли геноциду армянское население Османской империи. В результате геноцида более миллиона армян было убито и столько же выслано на погибель в пустыни Месо-

63 Տե՛ս «Կարմիր բանվոր», Աստրախան, 1919, N 1։

64 Տե՛ս Harry Stuermer, Deux ans de guerre a Constantinople, Paris, 1917 էջ 38, 39։

65 J. Lepsius, Bericht über die Lage des armenischen volkes in der Türkei, Պոտսդամ, 1916.

66 Տե՛ս А. Дживелегов, Судьба Армении, «Армянский вестник», 1916, № 1, էջ 5։

67 Տե՛ս «Армяне и война», Одесса, 1916, № 2—3, էջ 1։

потамии. Ответственность за геноцид падает и на тогдашних союзников турецких правителей — германских империалистов. Во время проводимых в Османской империи армянских погромов империалистическая Германия неизменно выступала в поддержку турецкого правительства. Германские империалисты вынашивали планы «очищения» Западной Армении от армян. «Очищенная» от армян территория, по их мнению, могла быть более надежным военно-стратегическим плацдармом для захватнических войн с Россией и Англией, а выселяемых армян предполагали использовать в Месопотамии в качестве дешевой рабочей силы на строительстве Багдадской железной дороги. Во время первой мировой войны кайзеровское правительство поддержало мероприятия турецких властей по геноциду армян, а его агенты на местах приняли в нем активное участие.

В противоположность кайзеровской Германии, демократические силы немецкого народа выступали в защиту преследуемых армян. Революционная организация германских рабочих «Спартак» и его руководитель Карл Либкнехт заклеймили кайзеровское правительство за участие в геноциде армян. Этому примеру последовали и другие передовые немецкие деятели. Выступление демократических сил немецкого народа заставило германское правительство перейти от политики замалчивания указанных событий в Турции к политике оправдывания геноцида армян и тем самым оно разоблачило себя в глазах всего мира, как соучастник этого преступления.